

Կանոնադրություն
«Քաղաքացիական գիտակցություն» ազատական հասարակական
կազմակերպություն
«Ազատ ուսանողների ֆորում» ուսանողական միության
(նոր խմբագրություն)

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. «Ազատ ուսանողների ֆորում» ուսանողական միությունը (այսուհետ՝ Ֆորում) «Քաղաքացիական գիտակցություն» ազատական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ «ՔԳ» ԱՀԿ) գաղափարական սկզբունքների հիման վրա և իր անդամների շահերի ընդհանրությամբ ստեղծված կամավոր միավորում է:
- 1.2. Ֆորումը ստեղծվել է «ՔԳ» ԱՀԿ Խորհրդի որոշմամբ, հանդիսանում է «ՔԳ» ԱՀԿ կառուցվածքային ստորաբաժանում:
- 1.3. Ֆորումն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով, «ՔԳ» ԱՀԿ Կանոնադրությամբ, «ՔԳ» ԱՀԿ ուսումնական հաստատությունների ակումբների (այսուհետ՝ Ակումբներ) կանոնակարգով և սույն կանոնադրությամբ:
- 1.4. Ֆորումը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:
- 1.5. Ֆորումի անդամների և «ՔԳ» ԱՀԿ-ի միջև հարաբերությունները կարգավորվում են «ՔԳ» ԱՀԿ Կանոնադրությամբ, Ակումբների կանոնակարգով և սույն կանոնադրությամբ:
- 1.6. Ֆորումի անդամների միջև հարաբերությունները կարգավորվում են սույն կանոնադրությամբ:
- 1.7. Ֆորումի հայերեն ամբողջական անվանումն է՝ «Ազատ ուսանողների ֆորում» ուսանողական միություն:
 - 1.7.1. Ֆորումի հայերեն հապավումն է՝ «ԱՈՒՖ» ՈւՄ:

1.7.2. Ֆորումի անգլերեն ամբողջական անվանումն է՝ “Free Students’ Forum” Students’ Union:

1.7.3. Ֆորումի ռուսերեն ամբողջական անվանումն է՝ студенческий союз “Форум Свободных Студентов”:

2. Ֆորումի նպատակները և խնդիրները

2.1. Ֆորումի հիմնական նպատակներն են՝

2.1.1. ներկայացնել և պաշտպանել ուսանողության իրավունքներն ու շահերը,

2.1.2. նպաստել ուսանողության իրավական, քաղաքական և քաղաքացիական գիտակցության, ինչպես նաև գիտակրթական մակարդակի բարձրացմանն ու զարգացմանը:

2.2. Ֆորումի հիմնական խնդիրներն են՝ օրենքով սահմանված կարգով՝

2.2.1. հետևողական լինել ուսումնական հաստատություններում տեղի ունեցող խախտումներին, բարձրաձայնել դրանց մասին և համապատասխան քայլեր ձեռնարկել դրանց վերացման շուրջ,

2.2.2. ներկայացնել և պաշտպանել ուսանողների իրավունքները և շահերը ուսումնական և այլ հաստատություններում, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,

2.2.3. համախմբել ուսանողությանը Ֆորումի նպատակների և ծրագրերի իրականացման շրջանակներում:

2.3. Ֆորումն իր նպատակների և խնդիրների իրականացման համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

2.3.1. կրթական համակարգի բարելավմանն ուղղված նախագծերի մշակում,

2.3.2. ուսումնական ծրագրերի իրականացում դասընթացների, սեմինարների տեսքով,

2.3.3. հետազոտությունների և վերլուծությունների իրականացում,

2.3.4. հրատարակչական աշխատանքի իրականացում,

2.3.5. հրապարակային միջոցառումների անցկացում,

2.3.6. Ֆորումի նպատակների և խնդիրների իրականացմանն ուղղված այլ գործառույթների իրականացում:

3. Ֆորումին անդամագրվելու և անդամագրումից դուրս գալու կարգը

3.1. Ֆորումին կարող է անդամագրվել ուսումնական հաստատություններում սովորող յուրաքանչյուր ուսանող, որն ընդունում է Ֆորումի կանոնադրությունը, Ակումբների կանոնակարգը, վերջիններիս նպատակներն ու խնդիրները և ցանկանում է մասնակցել դրանց գործունեությանը:

3.2. Անդամագրումն իրականացվում է «ՔԳ» ԱՀԿ Կանոնադրությամբ սահմանված կարգով՝ Ակումբներից մեկին միանալով, Խորհրդի որոշմամբ՝ անձի համապատասխան դիմումի հիման վրա:

3.3. Անդամությունը կարող է դադարեցվել դիմումի համաձայն կամ «ՔԳ» ԱՀԿ Խորհրդի կամ Ակումբի որոշմամբ, եթե Ֆորումի անդամը թույլ է տվել Ֆորումի կամ «ՔԳ» ԱՀԿ Կանոնադրության խախտում կամ Ֆորումի բարի համբավն արատավորող արարք:

3.4. Անդամությունը դադարեցնելու մասին Ակումբի որոշումները պետք է հաստատվեն Ակումբների նախագահների խորհրդի (այսուհետ՝ ՆԽ) համակարգողի կողմից:

3.5. Ֆորումի անդամը, որի մասնակցությունը դադարեցվել է Ակումբի որոշմամբ, իրավունք ունի բողոքարկել իր հեռացման հարցը ՆԽ-ում կամ «ՔԳ» ԱՀԿ Խորհրդում:

4. Ֆորումի անդամների իրավունքները և պարտականությունները

4.1. Ֆորումի անդամն իրավունք ունի՝

4.1.1. մասնակցել Ֆորումի Խորհրդի նիստերին, որին վերջինս մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով,

- 4.1.2. ընտրվել Ֆորումի ղեկավար մարմիններում,
 - 4.1.3. Ֆորումի նպատակների և խնդիրների իրականացման համար դիմումներ և առաջարկություններ ներկայացնել Ֆորումի ղեկավար մարմիններին,
 - 4.1.4. ստանալ տեղեկատվություն Ֆորումի գործունեության մասին,
 - 4.1.5. ազատ դուրս գալ Ֆորումի անդամությունից:
- 4.2. Ֆորումի անդամը պարտավոր է՝
- 4.2.1. մասնակցել Ֆորումի գործունեությանը,
 - 4.2.2. նպաստել Ֆորումի նպատակների և խնդիրների իրականացմանը,
 - 4.2.3. վճարել սույն կանոնադրությամբ սահմանված անդամավճարները,
 - 4.2.4. կատարել Ֆորումի կանոնադրական պահանջները, Ֆորումի ղեկավար մարմինների որոշումները:

5. Ֆորումի կառուցվածքը

- 5.1. Ֆորումի կառուցվածքային մարմիններն են՝
- 5.1.1. Ֆորումի Գերագույն Խորհուրդը,
 - 5.1.2. Ֆորումի Խորհուրդը (այսուհետ՝ ՖԽ):
- 5.2. Ֆորումի Գերագույն Խորհրդի և ՖԽ-ի գործունեության կանոնակարգերը հաստատում է «ԲԳ» ԱՀԿ Խորհուրդը:

6. Ֆորումի Գերագույն Խորհուրդը

- 6.1. Ֆորումի Գերագույն Խորհուրդը հանդիսանում է Ֆորումի բարձրագույն մարմինը, որը սահմանում է Ֆորումի գործունեության գլխավոր խնդիրները և ուղղությունները:
- 6.2. Ֆորումի Գերագույն Խորհուրդը բաղկացած է «ԲԳ» ԱՀԿ նախագահից, ՆԽ-ից և ՆԽ համակարգողից:

- 6.3. Ֆորումի Գերագույն Խորհուրդը հրավիրվում է յուրաքանչյուր մեկ տարին մեկ անգամ՝ «ՔԳ» ԱՀԿ նախագահի կողմից:
- 6.4. Ֆորումի Գերագույն Խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրել Ֆորումի Գերագույն Խորհրդի նախագահողը, ՆԽ-ն՝ իր անդամների 1/3-ի գրավոր պահանջով, կամ «ՔԳ» ԱՀԿ Խորհուրդը:
- 6.5. Ֆորումի Գերագույն Խորհրդի նիստերի նախագահող է համարվում «ՔԳ» ԱՀԿ նախագահը, իսկ քարտուղար՝ ՆԽ համակարգողը:
- 6.6. Ֆորումի Գերագույն Խորհրդի բացառիկ իրավասությանն են վերապահվում՝
- 6.6.1. *(կեսն ուժը կորցրել է 07.10.17թ. N 04-Լ որոշմամբ)*
 - 6.6.2. կատարված աշխատանքների վերաբերյալ ՖԽ հաշվետվությունը լսելը և գնահատելը,
 - 6.6.3. Ֆորումի Խորհրդի կազմի հաստատումը,
 - 6.6.4. Ֆորումի Խորհրդի պաշտոնավարման ժամկետի սահմանումը,
 - 6.6.5. Ֆորումի գործունեության և կառավարման վերահսկողությունը:
- 6.7. Հերթական Գերագույն Խորհրդի նիստ հրավիրելու՝ սույն կանոնադրությամբ սահմանված ժամկետները խախտելու դեպքում Գերագույն Խորհրդի նիստը հրավիրվում է «ՔԳ» ԱՀԿ Խորհրդի կողմից:
- 6.8. Ֆորումի Գերագույն Խորհրդի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում են «ՔԳ» ԱՀԿ նախագահը, ՆԽ համակարգողը և ՆԽ անդամների առնվազն 2/3-ը:

7. Ֆորումի Խորհուրդը, նրա իրավագորությունը և որոշումների ընդունման կարգը

- 7.1. Ֆորումի Խորհուրդը Ֆորումի գործադիր մարմինն է: ՖԽ-ն ձևավորվում է Գերագույն խորհրդի նիստում Ակումբների կանոնակարգի համաձայն՝ ՆԽ կողմից ներկայացված անձանցից:
- 7.2. ՖԽ-ն կազմված է ՖԽ նախագահից և ՖԽ անդամներից:

- 7.3. Գերագույն Խորհուրդը Գերագույն Խորհրդի նիստից հետո հրավիրում է ՖԽ առաջին նիստը, որի ժամանակ տեղի է ունենում ՖԽ նախագահի ընտրություն:
- 7.3.1. ՖԽ նախագահի թեկնածու են հանդիսանում ՖԽ բոլոր անդամները:
- 7.3.2. ՖԽ նախագահն ընտրվում է ՖԽ անդամների կողմից՝ փակ, գաղտնի քվեարկության միջոցով՝ համապատասխան նմուշի քվեաթերթիկի վրա գրելով իրենց նախընտրելի թեկնածուի անունը:
- 7.3.3. ՖԽ նախագահ է ընտրվում այն թեկնածուն, ով հավաքում է ՖԽ անդամների ձայների կեսից ավելին:
- 7.3.4. Եթե ՖԽ որևէ անդամ չի հավաքում ՖԽ անդամների ձայների կեսից ավելին, ապա առավելագույն ձայներ հավաքած երկու թեկնածուները մասնակցում են ՖԽ նախագահի ընտրությունների երկրորդ փուլին:
- 7.3.5. ՖԽ նախագահ է ընտրվում այն թեկնածուն, ով հավաքում է ՖԽ անդամների ձայների մեծամասնությունը:
- 7.4. ՖԽ-ն իր աշխատանքները համակարգում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են ՖԽ նախագահի կողմից ոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ:
- 7.5. ՖԽ արտահերթ նիստ կարող է հրավիրել ՖԽ նախագահն իր նախաձեռնությամբ, ՖԽ անդամների 1/3-ի պահանջով կամ «ԲԳ» ԱՀԿ նախագահի կամ «ԲԳ» ԱՀԿ Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով:
- 7.6. ՖԽ-ն ղեկավարում է Ֆորումի գործունեությունը Ֆորումի Գերագույն Խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում:
- 7.7. ՖԽ նիստը իրավագոր է, եթե նիստին մասնակցում են ՖԽ անդամների առնվազն 2/3-ը:
- 7.8. ՖԽ-ի որոշումներն ընդունվում են ՖԽ անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի: Ձայների հավասարության դեպքում նախագահի (նրա բացակայության դեպքում՝ նիստը վարողի) ձայնը վճռորոշ է:
- 7.9. ՖԽ-ն՝

- 7.9.1. քննարկում և լուծում է Ֆորումի կառավարմանը և գործունեությանը վերաբերող հարցերը, բացառությամբ Ֆորումի Գերագույն Խորհրդի բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի,
- 7.9.2. *(կեսն ուժը կորցրել է 07.10.17թ. N 04-Լ որոշմամբ)*
- 7.9.3. Ֆորումի նպատակներին և խնդիրներին համապատասխան առանձնացնում է ոլորտներ և ՖԽ անդամներից նշանակում է ոլորտի պատասխանատուներ,
- 7.9.4. *(կեսն ուժը կորցրել է 07.10.17թ. N 04-Լ որոշմամբ)*
- 7.9.5. հետ է կանչում ՖԽ նախագահին անդամների 2/3-ի պահանջով, որի համար նշանակում է ՖԽ նախագահի արտահերթ ընտրություններ, որն իրականացվում է սույն կանոնադրությամբ ՖԽ նախագահի ընտրությունների համար սահմանված կարգով:
- 7.9.6. Ֆորումի գործառույթներն իրականացնելու նպատակով անհրաժեշտության դեպքում սահմանում է անդամավճարներ,
- 7.9.7. իր գործունեությունը կառուցում է օրինականության, հավասարության, հրապարակայնության, հաշվետվողականության և փոխօգնության սկզբունքների վրա,
- 7.9.8. ընդունում է Ֆորումի նպատակների և խնդիրների իրականացմանն ուղղված այլ որոշումներ:

7.10. ՖԽ նախագահը՝

- 7.10.1. անհրաժեշտության դեպքում ՖԽ կազմից նշանակում է ՖԽ փոխնախագահ (ներ),
- 7.10.2. ղեկավարում է ՖԽ աշխատանքները, նախագահում է ՖԽ նիստերը,
- 7.10.3. ներկայացնում է Ֆորումն այլ մարմինների հետ հարաբերություններում,
- 7.10.4. ապահովում է ՖԽ-ի կապը «ՔԳ» ԱՀԿ Խորհրդի հետ,
- 7.10.5. հաշվետու է Ֆորումի Խորհրդին, «ԱՈՒՖ» ՈւՄ Գերագույն Խորհրդին և «ՔԳ» ԱՀԿ Խորհրդին,

- 7.10.6. սույն կանոնադրությամբ սահմանված կարգով հրավիրում է ՖԽ-ի հերթական և արտահերթ նիստերը, ձևավորում է նիստերի օրակարգը,
- 7.10.7. ՖԽ-ին, ՆԽ-ին և «ՔԳ» ԱՀԿ Խորհրդին ապահովում է անհրաժեշտ տեղեկատվությամբ,
- 7.10.8. պաշտոնավարում է ՖԽ պաշտոնավարման ժամկետի ողջ ընթացքում, բացառությամբ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի,
- 7.10.9. պաշտոնավարման ժամկետի կեսին հրավիրված նիստի ընթացքում փակ, գաղտնի քվեարկությամբ ստանում է ՖԽ վստահության քվե պաշտոնավարումը շարունակելու համար: Եթե ՖԽ նախագահը չի ստանում ՖԽ անդամների ձայների 2/3-ը, ապա հրավիրվում է ՖԽ նախագահի արտահերթ ընտրություններ, որն իրականացվում է սույն կանոնադրությամբ ՖԽ նախագահի ընտրությունների համար սահմանված կարգով:

8. Ֆորումի վերակազմավորման և լուծարման կարգը

- 8.1. Ֆորումի վերակազմավորման և լուծարման բացառիկ իրավունքը պատկանում է «ՔԳ» ԱՀԿ Խորհրդին, որն իրականացվում է «ՔԳ» ԱՀԿ Կանոնադրությամբ սահմանված կարգով:

9. Եզրափակիչ դրույթներ

- 9.1. Սույն կանոնադրությունն ուժի մեջ է մտնում «ՔԳ» ԱՀԿ Խորհրդի կողմից հաստատվելու պահից:
- 9.2. Սույն կանոնադրության փոփոխություններն ու լրացումներն ուժի մեջ են մտնում «ՔԳ» ԱՀԿ Խորհրդի կողմից հաստատվելու պահից:
- 9.3. Սույն կանոնադրությունն ուժը կորցնում է «ՔԳ» ԱՀԿ Խորհրդի կողմից այն ուժը կորցրած ճանաչելու պահից: